**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ԷԱՃԱՊՁԲ-2026/11-2-ԵՊԲՀ»

«Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար **հանդերձանքի և անկողնային պարագաների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ԷԱՃԱՊՁԲ-2026/11-2-ԵՊԲՀ»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2025 թվականի նոյեմբերի 26-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2025 թվականի նոյեմբերի 28-ին տրամադրված պարզաբանումը՝

*Հարցադրում*

Խնդրում եմ տրամադրել պարզաբանում մրցույթի 5-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի բնութագրի անհամապատասխանությունների վերաբերյալ 1. որքանո՞վ է այն համապատասխանում «Գնումների մասին. օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին: Ըստ օրենքի՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը: Տվյալ դեպքում վարագույրից բացի նախատեսված է նաև կառնեզ (քիվ), որն, ըստ ԳՄԱ դասակարգչի, առանձին գնման առարկա է: 2. Արդյո՞ք առկա չէ անհամապատասխանություն քիվի և վարագույրի չափերի միջև: Քիվի չափը տրված է 2.6 մետր, իսկ վարագույրի լայնքը՝ 1.6: 3. Ինչպե՞ս հասկանալ՝ վարագույրի ընդհանուր քանակը տրված է 215 մետր, սակայն չափերը՝ բարձրությունը՝ 1.8 մետր, լայքը՝ 1.6 մետր: Այսինքն, մեկ վարագույրի չափը 2.88 քմ: Քանակի հաշվարկն ինչպե՞ս է կատարվելու բարձրությունների թե՞ լայնությունների հանրագումարով: 4. Արդյո՞ք վարագույրի լայնքի չափում հաշվարկված է ծալվածքները, արդյո՞ք բարձրության չափում հաշվարկված է ժապավենի համար ծալվող մասը:

Վերոնշյալ պարզաբանման հարցմանն ի պատասխան գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է պարզաբանումը.

*Պարզաբանում*

Հարգելի հնարավոր մասնակից, թիվ 5 չափաբաժնով պահանջվող վարագույրն և քիվը խմբավորվել են մեկ չափաբաժնով, քանի որ տվյալ ապրանքները անմիջական կապ ունեն մեկը մյուսի հետ, դրանք երկուսն էլ ծառայում են մեկ նպատակի համար (վարագույրը չի կարող ծառայել իր նպատակին առանց քիվի, իսկ քիվի կիրառումը առանց վարագույրի նպատակազուրկ է), դրանց կիրառումը իրարից առանձին չի բավարարի այն կարիքը, որի համար իրականացվում է տվյալ գնման գործընթացը: Նշված գնման առարկաները առանձին չափաբաժիններով սահմանելու դեպքում չի կարող կիրառվել՝ «Արժեքը ներառում է կառնեզի ամրացումը պատին և վարագույրի կախումը: Տեղադրման համար անհրաժեշտ բոլոր պարագաները՝ մատակարարի հաշվին» պայմանը, որը բխում է Պատվիրատուի կարիքներից: Այսինքն՝ համապատասխան քիվով վարագույրի տեղադրումը և քիվի ամրացումը պատին ամբողջությամբ պետք է իրականացնի մատակարարը՝ ներառելով դրա համար անհրաժեշտ բոլոր պարագաները: Նշված մոտեցումը չի սահմանափակում և չի խոչընդոտում մրցակցությունը, քանի որ մասնակիցները կարող են առաջարկել գին ներառելով տվյալ չափաբաժնի համար բոլոր անհրաժեշտ ծախսերը: 2. Մեկ քիվի վրա կախվում է երկու վարագույր: 3. Անհրաժեշտ է 1.8 մետր բարձրությամբ և 1.6 մետր լայնությամբ 134 հատ վարագույր (հաշվարկ՝ 134x1.6): 4. Ծալվածքները և ժապավենի համար ծալվող մասը հաշվարկված են:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումները համակարգող Աստղիկ Գյուրջյանին:

Հեռախոս 093-455493

Էլ. փոստ a.gyurjyan@keystone.am

**«ԷԱՃԱՊՁԲ-2026/11-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով**

Հանձնաժողովի

| | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | ____________ | Անդրանիկ Հարությունյան |
| Անդամներ՝ | ____________ | Տիգրան Ղազարյան |
| | ____________ | Մարտին Գրիգորյան |
| Քարտուղար՝ | ____________ | Աստղիկ Գյուրջյան |

**ОБЪЯВЛЕНИЕ**

**о разъяснении приглашения**

Настоящий текст объявления утвержден решением Оценочной комиссии
№1 от 28 ноября 2025 года и опубликовывается
в соответствии со статьей 29 Закона Республики Армения "О закупках"

Оценочная комиссия закупочной процедуры с кодом «ԷԱՃԱՊՁԲ-2026/11-2-ԵՊԲՀ», организованной для приобретения товаров одежды и постельных принадлежностей для нужд «Ереванского государственного медицинского университета имени Мхитара Гераци», ниже представляет вопрос, полученный 26 ноября 2025 года по данному приглашению с тем же кодом, а также разъяснение, предоставленное 28 ноября 2025 года.

**Вопрос**

Просим предоставить разъяснение относительно несоответствий, выявленных в техническом описании товара, предусмотренного по 5-му лоту конкурса:

В какой мере оно соответствует требованиям части 2 статьи 25 Закона «О закупках»? Согласно закону, запрещается объединять в один лот предметы закупки, имеющие различные характеристики, за исключением случаев, когда заказчик обосновывает необходимость такого объединения. В данном случае, помимо занавеса, предусмотрен также карниз (карнизный профиль), который согласно классификатору CPV является отдельным предметом закупки.

Не имеется ли несоответствия между размерами карниза и занавеса? Размер карниза указан как 2,6 м, тогда как ширина занавеса — 1,6 м.

Как следует понимать, что общее количество занавеса указано 215 метров, тогда как размеры одного изделия составляют: высота — 1,8 м, ширина — 1,6 м? То есть площадь одного занавеса — 2,88 м². Каким образом будет производиться расчет количества — по сумме высот или по сумме ширин?

Учитываются ли складки (фалды) при расчете ширины занавеса? Учитывается ли припуск для ленты (часть, предназначенная для подгиба) при расчете высоты?

В ответ на вышеуказанный запрос о разъяснении оценочная комиссия представляет следующее разъяснение.

**Разъяснение**

Уважаемый потенциальный участник,

По лоту № 5 занавес и карниз были объединены в один лот, поскольку данные товары имеют непосредственную взаимосвязь друг с другом и оба служат одной цели (занавес не может выполнять свое назначение без карниза, а использование карниза без занавеса лишено смысла). Их применение отдельно друг от друга не удовлетворит ту потребность, ради которой осуществляется данная закупка.

В случае определения указанных предметов закупки отдельными лотами невозможно будет применить условие: «Стоимость включает крепление карниза к стене и развешивание занавеса. Все необходимые для монтажа принадлежности — за счёт поставщика», которое вытекает из потребностей Заказчика. То есть установка занавеса с соответствующим карнизом и крепление карниза к стене должны быть полностью выполнены поставщиком, включая все необходимые комплектующие.

Такой подход не ограничивает и не препятствует конкуренции, поскольку участники могут предложить цену, включающую все необходимые расходы по данному лоту. 2. На один карниз подвешиваются два занавеса. 3. Требуется 134 занавеса высотой 1,8 м и шириной 1,6 м(расчет: 134 × 1,6). 4. Складки и припуски для подшива ленты учтены.

Для получения дополнительной информации в связи с уведомлением вы можете обратиться к координатору закупок Астгик Гюрджян.

Телефон: 093-455493

Эл.  почта почта: a.gyurjyan@keystone.am

Оценочная комиссия по котировке цен по процедуре закупа ԷԱՃԱՊՁԲ-2026/11-2-ԵՊԲՀ

Комиссии

| | | |
|---|---|---|
| Председатель комиссии | _______________ (подпись) | Андраник Арутюнян |
| Члены комиссии | _______________ (подпись) | Тигран Газарьян |
| | _______________ (подпись) | Мартин Григорян |
| Секретарь комиссии | _______________ (подпись) | Астгик Гюрджян |